

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Արեւմտեան Ասիոյ կամ Ասիական Տաճկաստանի ժողովրդոց վրայ :

Հին կամ առասպելական ժամանակները թողլով Սկիւթացւոց առաջին արշաւանքէն ետեւ, որոնք բաւական ատեն տիրապետած են Ասիոյ այս մասին վրայ, հետեւեալ ազգերը կը գտնենք այս մեծ թերակղզոյն մէջ. այսինքն Ասորեստանեայք, Բաբելոնացիք կամ Բաղդէացիք, Մեգացիք կամ Մարք, Հայաստանեայք (Հայք կամ Արմէնք), Արամէացիք կամ Ասորիք, Արաբք, Քանանայիք (որոնց մէջ նաև ֆիւնիկեցիք), Եբրայեցիք (Հրեայք կամ Եհուտիք), Լիւգացիք, Կապադովկացիք, Փոիւգացիք, և ուրիշ շատ մը մանր ազգեր և ցեղեր : Ասորեստանեայք նինոսի առաջնորդութեամբ Սկիւթները հալածելով իրենք եղան ինքնակալ բոլոր թերակղզոյն . բայց և այնպէս միւս ազգերն ալ պահած էին իրենց սեպհական յորինուածութիւնը, լեզուն, սովորութիւնները և ինքնօրէն կառավարութիւնը՝ ինքնօրոյն թագաւորով . անանկ որ Ասորեստանի իշխանութիւնը՝ վերին տէրութիւն կամ յառաջագահութիւն մըն էր, և միւս ազգաց հպատակութիւնը՝ տարեկան ընծայաբերութիւն մը (կամ տուրք մը) էր, և պատերազմի ժամանակ ալ ստիպուած էր ամեն ազգ իր բանակաւ ձեռնառու ըլլալ ինքնակալին : Դրսէն Սեպտտրի և ուրիշ եգիպտացի թագաւորաց արշաւանքն՝ ստոյգ է՝ ոչ սակաւ փոխօտութեանց և տեղափոխութեանց առիթ տուին, սակայն ժամանակն չիօթ ըլլալով՝ անոնց մանրամասնութեանց մէջ չենք ուզեր մտնել : Չանց կ'ընենք նաև Սկիւթացւոց երկրորդ արշաւանքը : Բաբելոնացիք յաջորդելով Ասորեստանեայց, անոնք ալ նոյն յարա-

բերութեամբ կը վարուէին : Պարսից ժամանակ կառավարութեան կերպը առաւել ևս կեղտնացած էր, և շատ գաւառներ պարսիկ նախարարներէ կը կառավարուէին. և մնացած թագաւորութիւններն ալ յաւէտ նախարարութեան երևոյթն ունէին . սակայն և այնպէս իւրաքանչիւր ազգ իր սեպհական յատկութիւնները և ներքին ինքնօրէնութիւնը պահած էր :

Բայց իրերը նոյն վիճակի մէջ չմնացին՝ երբ որ մեծն Աղեքսանդր այս թերակղզոյն տիրեց . մակեդոնական քաղաքակրթութիւնը յունական սովորութիւններով ամեն կողմ տարածուեցաւ : Ինչպէս նաև յունական լեզուն ալ քաղաքական յարաբերութեանց պաշտօնական լեզու եղաւ : Աղեքսանդրի պետութեան աւերակաց վրայ կանգնուած Սելևկեան, Հայկական, Պարթևական տէրութիւններն և ուրիշներն ալ, առաւել կամ նուազ՝ գրեթէ մի և նոյն մակեդոնական նախատպէն գաղափարուած են . ըստ կերպի կառավարութեան, ըստ պաշտօնական լեզուի յարաբերութեան, և այլն . իրենց գրամներն անգամ յոյն գրով գրոյմուած են և մակեդոնական ձևերն ունին, Տակաին ազգայնութեանց յատկութիւնները պահուած էին, բայց մակեդոնական քաղաքակրթութիւնը կը զօրէր . որ և ազգաց և ժողովրդոց յարաբերութիւնները աճեցուցեր, դիւրինցուցեր, և նոյն ազգերն իրարու մտեցուցեր էր : Այս յունական քաղաքակրթութեան ներքև առաւել ևս ընկած էր Փոքր Ասիա, որ և իրիստ շատ աճեցաւ Միհրդատեան ըսուած պատերազմներէն

վերջը, երբոր Հռովմայեցիք հետզհետէ նոյն երկրին մէջ մնացած փոքր թա-  
 գաւորութիւնները հռովմէական պե-  
 տութեան նահանգ ըրին: Այնուհետե  
 կը յիշուէին թէպէտև կապաղովկիա,  
 Պոնտոս, Բիւթանիա, Փոիւզիա, Գա-  
 ղատիա, Կիլիկիա, Իսաւրիա, և այլն.  
 սակայն ճշդիւ խօսելով՝ չկային իբր ու-  
 րոյն ազգ կապաղովկացիք, Պոնտացիք,  
 և այլն. որոնք յունա-հռովմէական քա-  
 ղաքակրթութեամբ 'ի մի ձուլուեր և  
 իբր թէ մէկ ազգ եղեր էին, ընդհա-  
 նուր յունական լեզուաւ և ուսմամբ  
 հրահանգեալ: Անկէց քիչ մը ետքը  
 քրիստոնէութեան ծաւալելովը՝ քաղա-  
 քականօրէն միացեալ այս ազգերը՝  
 կրօնական զօգիւ առաւել ևս ամրա-  
 ցան, և այն մնացած սակաւ յատկու-  
 թիւններն, և նաև հին լեզուաց մնա-  
 ցորդները՝ որ տակաւին տեղ տեղ կը  
 խօսուէին, ինչպէս նոր կտակարանի  
 մէջ յիշուած լիկայոններէնը, վերցան:  
 (Ձեռագիրք հին սոմարադրի մը մէջ  
 հանդիպած ենք կապաղովկացւոց, Պոն-  
 տացւոց, Լիկայոնացւոց, և այլն, տա-  
 րուան ամիսներուն տուած անուանա-  
 կոչութեանցը): Եւ այսպէս բոլոր փոքր  
 Ասիա՝ գրեթէ մինչև Եփրատ, եղեր էր  
 ազգ մի և լեզու մի, միակրօն և միա-  
 կերպ: Եւ եթէ անկէց ետքը ատեն ա-  
 տեն կը յիշուին իսաւրացիք, Փոիւզա-  
 ցիք, և այլք, անոնք հիմակուան Քիւր-  
 տերուն պէս լեռները և սարերը ապաս-  
 տանած՝ բարբարոսական կեանք մը կը  
 վարէին զուրկ 'ի քաղաքակրթութե-  
 նէ: Ինչպէս են նաև հիմայ անոնց մնա-  
 ցորդները՝ Աւշարները, որ իթէ չենք  
 սխալիր, հին իսաւրիքն կամ իսաւրա-  
 ցիքն են. և նաև Ձէյպէքները՝ հին Սո-  
 լիմ և Պոիզ երկու սահմանակից ժողո-  
 վըրդոց մնացորդները, (եթէ Ձէյպէքը՝  
 իզպէք անուան աղաւաղութիւնը չէ):  
 Եփրատայ արևմտեան կողմը գտնուած  
 Հայ գաւառներն ևս նմանօրինակ պայ-  
 մանի մը մէջ կը գտնուէին: — Ասորիք՝ Ա-  
 ղեքսանդրի արշաւանքէն ետև Սելևկեան  
 թագաւորութեան ժամանակ, վարժե-  
 ր մակեդոնական քաղաքակրթութեան

և յունական լեզուին և ուսման, թէ-  
 պէտ և ասորի լեզուն ալ բոլորովին չէր  
 ջնջուեր: Ասորիք ևս հռովմէական նա-  
 հանգ եղաւ, և քրիստոնէական կրօնից  
 ծաւալելովը՝ այն տեղ ալ այլ և այլ  
 ճիւղեր և ցեղեր 'ի մի ձուլուեցան, միով  
 հրահանգով, որ էր յունա-հռովմէական:  
 Եփրատայ արևելեան կողմը գտնուած  
 ազգերէն՝ Հայք, ինչպէս առաջ ալ ը-  
 սինք, Աղեքսանդրի տէրութենէն 'ի վեր  
 մակեդոնական կարգերուն և քաղաքա-  
 կրթութեան վարժած էին. Արշակու-  
 նի թագաւորաց հետ նոր դրից մէջ կը  
 գտնուէին, մակեդոնական-հայկական-  
 պարթևական քաղաքակրթութիւն մը  
 ունենալով: Բայց կ'երևի թէ առաջինը  
 աւելի կը զօրէր: Մեծին Տիգրանայ մա-  
 հուանէն ետև՝ Հայաստան սերտ յարա-  
 բերութեան մէջ ըլլալով հռովմէական  
 ինքնակալութեան հետ, շատ մը հռով-  
 մէական սովորութիւններ, նոյն իսկ  
 հռովմէական քաղաքակրթութիւնը մե-  
 ծաւ մտածմբ Հայաստան մտնելու կը  
 սկսէր և անկէց կամայ կամայ կը ծա-  
 ւալէր Արեաց միւս ցեղերուն մէջ: Որով  
 և պարթևական պետութիւնն ալ՝ որ ար-  
 դէն ըստ իմիք մակեդոնական — պար-  
 թևական քաղաքակրթութիւն մը ունէր,  
 կը սկսէր հռովմէականին ևս վարժիլ:  
 Եւ այսպէս յունա-հռովմէական քաղա-  
 քակրթութիւնը մինչև դէպ 'ի Հընդ-  
 կաստանի սահմանն առաջ կ'երթար:  
 Միայն արաբական թերակղզին իր նա-  
 խաղարեան վիճակին մէջ կը մնար:  
 Այս ամեն գէպքերը և յեղափոխու-  
 թիւնները հին ազգաց թիւը շատ նուա-  
 ղեցուցեր էին, և բաց 'ի քանի մը մանր  
 ժողովուրդներէ, և քացածները ամենը  
 մէկէն երկու երեք յորջորջմանց մէջ  
 ամփոփուեր էին, որոց մին Հայն էր, որ  
 իր սեպհական լեզուն և ազգայնութիւ-  
 նը և ինքնօրէնութիւնը պահած էր:  
 Իրաց այս վիճակին մէջ՝ պարթև-ար-  
 շակունի ցեղը Պարսկային պետութիւնը  
 կորսնցունելով՝ լրեն կը յաջորդէր Սա-  
 սանեան Պարսիկ ցեղը: Ասիկայ Արեաց  
 ցեղերը կամ բոլորովին միացնելով, և  
 կամ՝ անոր այլ և այլ թագաւորութիւն.

ները իր գլխաւորութեան ներքև ժողովելով նպատակ դրած էր իրեն՝ մեծին կիւրոսի կանգնած ինքնակալութիւնը նորոգել: Կը ջնջէր կը վերցունէր Պարսկային պետութեան մէջ յունա-հռովմէական քաղաքակրթութեան հետքը, և բնիկ Պարսկային ապրելու կերպ մը հաստատելու ետևէ կ'ըլլար. որպէս զի կարող ըլլայ ինդոսի և Եփրատայ մէջ տեղ գտնուած իր տէրութիւնը ամրացնել, և անկէջ առաջ քալելով Հռովմայեցիները փոքր Ասիայէն և Ասորիքէն վաննել:

Սասանեան Պարսից այս գաղափարին համաձայն չէր հռովմէական հրահանգը քաղաքակրթեալ Արշակունեաց Հայաստանը. ասոնք երկայն ատեն փոփոխ բաղդիւ իրարու հետ կուռեցան զէն 'ի ձեռին. հռովմէական ինքնակալութիւնն ալ իր դարաւոր նիգրակացին (Հայաստանի) կողմն էր: Քիչ մը ետքը Հայաստան քրիստոնեայ ըլլալով՝ Պարսից և Հայոց մէջ պաղուծիւնն առաւել ևս աճեցաւ: Մեծին կոստանդինոսի յաջորդները կամ Արևելեան կայսերք՝ փոխանակ այս պարագայն յօգուտ 'ի կիր արկանելու, ձախողակի քաղաքականութեամբ մը պարսկային ձկտմանց նպատամատոյց կ'ըլլային. որով և յաջողեցան Սասանեանք իրենց ոսոխը բնկնելու: Եւ ոչ այսպի միայն. այլ նաև Արշակունի թագաւորութիւնը Հայաստանէն վերցուելէն ետև, Բիւզանդեանց ապիկարութեանը վստահանալով՝ Պարսկային պետութեան մէջ եղած քրիստոնէից յայտնապէս հրաւէր կարգացին՝ քրիստոնէութիւնը թողլու, և արեգական, լուսնի, և կրակի պաշտօն տանելու. կրօնական միութեամբ կարծեցին իրենց նպատակին հասնիլ. չի մտածեցին՝ որ կրօնից դէմ եղած որ և է բռնութիւնը՝ երբէք յաջողութիւն չէ գտեր, ինչպէս այս անգամ ևս տեսնուեցաւ: Վասն զի՝ Հայաստան՝ որ երբեմն նոյն իսկ հռովմէական ինքնակալութեան դէմ (անոր դեռ հեթանոս եղած ատենը) զիտցեր էր քաջութեամբ իր քրիստոնէութիւնը պաշտպանել և

ամեն կողմ յաղթական հանդիսանալով՝ Մաքսիմիանոս Դայա ինքնակալը կորազուլու Հայաստանէն դուրս վարել. նոյն Հայաստան՝ թէ և առաջի թագաւորի և թիկանց՝ դարձեալ գէղերք ձեռքն առաւ, և վարդանայ ու վահանայ առաջնորդութեամբ մղուած երկարատև և արինահնդ պատերազմները՝ շատ աղէկ համոզեցին Տիգրանի արքունիքը՝ որ այս վրիպակ քաղաքականութեամբը պիտի չկրնար յաջողցնել իր ծրագիրը: Ճանչցաւ, այո, Պարսկաստան իր վրիպակը, բայց դժբաղդաբար այսպի առին թափելէ, աւերմունքէ և անդամանելի կորուստներէ ետև. և փոխեց այնուհետև իր քաղաքականութիւնը: Կեդրոնացումն տեղ՝ աւելցուց ազգաց արտօնութիւնները և ինքնօրէնութիւնը. և բռնի իր կրօնքը ամենուն ընդունելի ընելու գաղափարին հակառակ՝ կատարեալ ազատութիւն չնորհեց կրօնից. և թողլ տուաւ որ իւրաքանչիւր հասարակութիւն իր զուանութեան համեմատ ընթանայ ազատօրէն: Եւ որովհետև նոյն ատենները յունա-հռովմէական քաղաքակրթութիւնը՝ Բիւզանդացոց քով իսկ չէր այլ ևս ամբողջ պահուած իր պայծառութեան ու վսեմութեան և կարգաւորութեան մէջ. այս ամեն կերպով նուազեալ ստորին կայսերութեան անհաշտ ոսոխը (Պարսկաստան), անոր վրիպակները իրեն օգտին ծառայեցրնելով, և նոյն արևելեան ինքնակալութեան մէջ յաճախեալ տարածայնութիւնները և կրօնական խնդիրները տածելով՝ և անոնց նպատամատոյց ըլլալով, կը ջանար իր սահմանին մէջ եղած քրիստոնէից և Բիւզանդեանց մէջ պաղուծիւն ձգել, և զանոնք իրարմէ հեռացնել. որպէս զի իր տէրութեան հետ սերտիւ կապելով՝ պարսկային պետութիւնը՝ գտնէ մինչև Եփրատ ամուր բռնել կարենայ:

Այս դէմ ընդ դէմ քաղաքականութեան ազդեցութիւնը նուիրապետական կարգաց մէջ ևս մեծ փոփոխութիւն պատճառած էր՝ Եփրատայ արե-

ւելեան կողմը գտնուած քրիստոնէից նկատմամբ: Հայոց կաթողիկոսութեանն զատ (ընդ որով էին և վրաց ու Աղուանից կաթողիկոսութիւնները), կային ևս ուրիշ երկու (և երբեմն երկը) կաթողիկոսութիւնք՝ Ասորեստանի և Միջագետաց մէջ, որոնք Ասորական հնամամբ ճերմիկ կ'անուանէին, որ կաթողիկոս ըսել է: Նոյնպէս այս հակառակընդդէմ քաղաքականութեան պատճառաւ եփրատայ մէկ ափունքէն միւսը՝ ոչ սակաւ գաղթականք երթին կեցին. նաև ասկէց առաջ եկաւ Նաստուրի և Եաքուպի ըսուած հասարակութեանց ծագումը: Առաջինը միայրդ էր հին Ասորեստանեայց և Բաղդադեացոց. (ասոր մէկ մասը՝ յետ ժամանակաց Գիլատանի անուամբ ուրոյն հասարակութիւն եղաւ): Երկրորդը կը բաղկանար այն Ասորիներէն՝ որ Միջագետք կը բնակէին. ինչպէս նաև Ասորիքէն Միջագետք գաղթող Ասորիներէն. (ասոր ևս մէկ մասը յետ ժամանակաց՝ Սուրիանի անուամբ ուրոյն հասարակութիւն եղաւ Միջագետաց և Ասորիքի մէջ):

Պարսկները այս կերպով իրենց տէրութիւնը մինչև Եփրատ ըստ բաւականին ամրացած համարելով՝ այլ ևս նկատմունք չունէին հպատակեալ ազգաց, ինչպէս և Հայոց համար, զորս բոլորովին անկարող կը կարծէին իրենց հակառակ դործ մը ընելու. ուստի և համարձակ ձեռք զարկին իրենց նախնական (կիրոսի ինքնակալութիւնը նորոգելու) ծրագրին գործադրութեանը որով և 80ամեայ (540-620) պատերազմին սկիզբն զրուելով՝ Եփրատայ երկու ափանց վրայ գտնուած գաւառները շատ վնասուեցան, աւերեցան և նուազեցան ՚ի բնակչաց: Երկայն և փոփոխ բազդիւ կուռեղէն ետև, երբոր Պարսիք վերջին ուժով մը կայսերականաց վրայ ընկնելով և զանոնք մինչև Բոսփորի ափունքը մղելով՝ իրենց ծրագիրը հուսկ ուրեմն ՚ի զուխ տարած կը համարէին. Հննայ խաբանին կայսեր հետ նիզակակցութիւնը, և Հայաստանի (որ

արդէն բոլորովին զոհ չէր՝ Պարսից վարուելու կերպէն) եղած կորուսաներուն և աւերմանց և կոտորածոց համար ևս՝ անոնց դէմ զայրացած ըլլալով Մովսէս Գնունուոյ առաջնորդութեամբ վրատարանութիւն, իրաց կերպարանքը փոխեց: Մինչդեռ Պարսից մեծ բանակը Բաղդեգոն կեդրոնացած Բոսփորի ներուցն անցնելու հնարք մը կը մտածէր՝ որպէս զի Բիւզանդիոն մտնէ և խնդիրը վերջացնէ, անդիէն կայսերական զօրաց մնացորդը՝ Հայաստանի սահմանաց մօտ կեդրոնանալով՝ Հոն և Հայ բանակաց հետ Միջագետքէն և Ասոր պատականէն կ'արշաւէր, և մինչև Տիգրանի դռները առաջ կ'երթար: Հաշտութիւնը ՚ի վնաս Պարսից կնքուելէն ետև՝ Բիւզանդիոյ արքունիքը զորձայտ վրիպակ քաղաքականութեամբ Հայոց սիրտը իրմէ կ'ուժայնէր: Ժամանակին հանգամանքը և խոհեմութիւնն այնպէս կը պահանջէր՝ որ Հայաստան կայսերական վերին հովանաւորութեան ներքև ինքնօրէն տէրութիւն մը ըլլայ. որչափ հեռու բան անոնց համար, մանաւանդ որ պարտեալն Պարսկաստան՝ իր ներքին շփոթութիւններովը՝ առաւել ևս արագութեամբ դէպ ՚ի իր վերջին անկումը ընթանալով՝ կը յուսային Հայաստանը այնուհետև առանց դժուարութեան և ապահովութեամբ իրենց ձեռքը պահել. բայց շատ քիչ ետքը այս վրիպակ քաղաքականութեան վնասակար հետևանքը յերևան ելան:

Յիշեալ 80ամեայ պատերազմներուն ժամանակ՝ Պարսից ձեռք առած վարչական կերպը, իրենց բանակաց երկար առեւն Ասորիքի մէջ դեգերելովը նոյն երկրին բնակչացը վրայ (որ քրիստոնէայ էին, և ընդհանրապէս մի և նոյն Արամէական կամ Ասորի ծագումն ունէին), քիչ ազդեցութիւն ըրած չէր: Պարսք վերը յիշուած վերջնական պարտութենէն ետև՝ Ասորիքէն ևս ձեռնարկ եղած էին, և հետևաբար նոյն երկիրը զարձեալ Բիւզանդեանց ձեռքը մնացած էր: Այս մեծ դէպքին վրայ հաղու թէ մէկ կամ երկու տարի ան.

ցած էր, և ահա նոյն երկրին բնիկնե-  
րուն մէջ մեծ յեղափոխութիւն մը ե-  
լաւ, որ և 'ի հուսկն ժողովորդեան յեր-  
կուս ծուէնս պատառելովը վերջացաւ.  
այս երկու պառակաց մին՝ Մեքէթի  
կ'անուանէր, այն է թագաւորական  
կամ կայսերական, յունական լեզուաւ,  
ծիսիւ և սովորութեամբ, և կայսերա-  
կան իշխանութեան հաւատարիմ հպա-  
տակութեամբ. իսկ միւսը՝ Մարգայիւր,  
այն է՝ ինքնակամ կամ ինքնօրէն (ետ-  
քէն անուանեցան Մարոնի), կայսե-  
րական իշխանութեան դիմակաց, և  
ասորի լեզուաւ, ծիսիւ և սովորու-  
թեամբ:

Ասորիքի այս տարածայնութիւնը,  
Հայաստանի վերը յիշուած տժգոհ վի-  
ճակը, և Պարսկական պետութեան  
անկածութիւնը՝ մեծապէս դիւրացու-  
ցին Արաբացոց արշաւանքներուն յա-  
ջողութիւնը: Կայսերական բանակաց  
քանի մը պարտութենէն ետև՝ Եար-  
մուքի եւօրեայ ճակատամարտը Աս-  
որիքի բաղդը որոշեց. և պարտեալ բա-  
նակին մնացորդաց հետ, Յունա-Հուով-  
մէականին յաջորդող Բիւզանդեանց  
քաղաքակրթութիւնը և լեզուն՝ Ամա-  
նոսի և Տաւրոսի լեռներէն անդին  
կը մղուէր: Սասանեանց արևապաշտ  
Պարսկաստանը՝ արդէն վերջին քայքայ-  
ման վրայ ըլլալով՝ ստորին եփրատայ  
ափանցը վրայ քիչ ժամանակ տկար  
դիմակալութենէ մը ետև՝ կ'ընդունէր  
մահմէտական Արաբացոց իշխանու-  
թիւնն ալ, օրէնքն ալ, կրօնքն ալ, և  
Արաբական ինքնակալութեան ամենէն  
աւելի նպաստաւորեալ և արտոնա-  
ցեալ նախարարութիւնը ըլլալու բաղ-  
դը կ'ունենար: Հայաստան՝ որ թէ և  
սոճոհ՝ Եարմուքի ափանց վրայ իր  
պարտքը կատարած էր, և իր դիպա-  
ձիք այն զնաւորաց ըրած նախճրաց յի-  
շատակը՝ Արաբացոց քով՝ Գոյոճ կու-  
րուքեան<sup>1</sup>, անուանելով առակ եղած

էր, Հայաստան՝ Բիւզանդեանց՝ քիչ մը  
առաջ յիշուած անխոհեմ ընթացքին  
համար՝ չունենալով ներքին կարգաւո-  
րեալ յորինուածութիւն մը, մանա-  
ւանդ թէ իր քաջերէն զրկուած, որոնք  
կայսերականաց թուլութեամբը և այ-  
լոց մատնութեամբը՝ Յորդանանու դաշ-  
տերուն վրայ ընկեր էին (Եարմուքի  
ճակատամարտին մէջ). թէպէտ իր քա-  
նի մը մնացած քաջ նախարարաց ա-  
ռաջնորդութեամբը յուսահատ քաջու-  
թեամբ՝ հարաւէն եկած հրոսակին դէմ  
կռուեցաւ, սակայն տեղէ մը օգնու-  
թիւն չդտնելով՝ վերջապէս ընկճե-  
ցաւ, և Հայաստան ևս Արաբական զա-  
ւառ եղաւ:

Այլ այսուհետև Բիւզանդեանց Հա-  
յաստանի նկատմամբ բռնած քաղա-  
քականութիւնը՝ չէ հնար ոչ մեկնել և  
ոչ բանի մը յարմարցնել: Եւ այս ըն-  
թացքին հետևութիւնն եղաւ երկու  
կողման իրարու հետ պաղութեան ա-  
ճումն, և ասելութեան բորբոքումն.  
յորմէ երկու կողմն ևս բայց առաւելա-  
պէս իրենք զնատուեցան: Կոստանդնու-  
պոլսի արքունեաց շատոնց 'ի վեր գործ-  
ածած ձախողակի քաղաքականութիւ-  
նը և նոյն քաղաքին կղեր՝ գործադրելու  
հետամուտ եղած փառասէր ծրագիրը,  
Պարսից և Արաբացոց քրիստոնեայ  
հասարակութեանց նկատմամբ ձեռք  
առած միջոցները և անոնց հետևու-  
թիւնքը, և Արևելքի միւս ազդաց նուի-  
րապետական կարգին մէջ ստացած  
դրից արտաքին ճոխութիւնը, միանդա-  
մայն մէկտեղ գալով՝ պատճառ եղան  
այնչափ վիճից, խնդրոց, յուզմանց և  
տարածայնութեանց, և նոյն իսկ արիւն-  
լուայ կոխներու, որոնք Աօհոյ այս գե-  
ղեցիկ և քաղաքակրթեալ մասը՝ դար-  
ձեալ բարբարոսութեան մէջ ձգել կ'ըս-  
սկանային: Եւ ասանկով բարեկար-  
գութիւնը խանդարեցաւ, աղքատու-  
թիւնը զօրացաւ, սոցիալութիւնը տի-

<sup>1</sup> Արաբացի տարեգիրը կը պատմեն որ՝  
Հայ ազնոյնաւորներն Արաբացոց քաջե-  
րէն 700 զինուոր սպաններ էին՝ ամենն ալ

աչքերնէն զարնելով, ուստի և այնպէս Գործ  
կուրորեան անուանեցաւ պատերազմին այն  
մասը:

րեց, զգացմունքը նուազեցաւ, գերու-  
թիւնը՝ սովորութեամբ ունակութիւն  
եղաւ: Այն Հայաստանն՝ որ երբեմն  
Արեաց Տիրոջ « վատ քան զատրին՝ ըզ-  
հայն համարիմ » խօսքին վրէժխնդիր ը-  
լալու համար՝ այնչափ աղմուկ հաներ,  
և այնչափ արիւն թափեր էր, մինչև որ  
հարկադրեցաւ Պարսկաստան՝ իր նոր  
թագաւորին բերնովը խոստովանելու՝  
թէ հայը՝ պարսիկներուն հաւասար  
քաջ և արի է, և յարգեց Հայաստանի  
արածունութիւններն և ինքնօրէնութիւ-  
նը. այն Հայաստանն կ'ըսեմ, յետոյ ե-  
ղաւ ատեն՝ որ ոչ խօսքով միայն, այլ  
նաև գործքով եղած խիստ ծանր ան-  
արդութեանց խուլ, յոյլ և թոյլ զըտ-  
նուեցաւ. թող ուրիշ ազգերը:

Ինչպէս Սասանեան պետութեան  
ժամանակ Եփրատայ արևելեան կող-  
մերը, և Արարացոց Ասորիքի տիրելովը՝  
նոյն երկրին մէջ մինչև Տորոսի սահ-  
մանները, ասանկ ևս թուրք պետու-  
թեան ատեն նոյն իսկ փոքր Ասիոյ մէջ,  
Բիւզանդեանց կեդրոնացուցումը և քա-  
ղաքակրթութիւնը գրեթէ ըստ բոլո-  
րին տապալեր էր: Եւ օսմանեան պե-  
տութիւնը՝ անոր վերջին հարուածը  
տուաւ:

Այս մեծամեծ անցքերը՝ Մոնկոլաց,  
Լանկ-գիմուրի և այլոց արշաւանքներու  
վը մէկ տեղ՝ Ասիական Տաճկաստանի  
ըստ ամենայնի նոր կերպարանք մը  
տուած էին. Յոյնք կամ յունական լե-  
զուաւ և սովորութեամբ վարուող հա-  
սարակութիւնը հարաւէն և արևելքէն  
վրայ եկած արշաւանաց առջևը հետ-  
զհետէ ընկրկելով՝ փոքր Ասիոյ արև-  
մտեան ծայրերը և Եւրոպական Տաճ-  
կաստանի հարաւային գաւառները ամ-  
փոփուեր էին. թողլով իրենց ետևը՝  
յաւէտ յունադաւան, քան թէ բուն  
յոյն կամ հելլեն հասարակութիւննե-  
րը: — Գալով Հայոց, գործը բոլորովին  
ասոր հակառակն էր. ըստ որում Արև-  
մտեան Ասիոյ արևելքի կողմանէ գուռը՝  
Հայաստանն ըլլալով սոյն թերակղզւոյն  
վրայ եղած ամեն արշաւանք՝ գրեթէ  
առաջ Հայաստան կը մտնէր, և անկէ

կը յառաջանար անոր միւս աշխարհ-  
քները և գաւառները. և այս մարդա-  
կոյտ հեղեղներէն մղուելով՝ կամաց կա-  
մաց հայ ազգը դէպ յարեմուտս մինչև  
Արշիպեղազոս, Պրոպոնտիս և անդր  
ևս տարածուեր էր, գրեթէ անընդհատ  
շարունակութեամբ մը. և թողլով այն  
Հայերը՝ որ հեռու տեղեր և տէրութիւն-  
ներ գաղթելով՝ բոլորովին կտրուեր էին  
մայր հայրենիքէն, քիչ մը առաջ յի-  
շուած՝ շարունակեալ հայութիւնը (այս-  
ինքն՝ ազգին ամենէն մեծ մասը) կը  
պարփակէր հետևեալ սահմանաց մէջ.  
որք են՝ հիւսիսէն Սևա ծով և Կովկա-  
սեան լեռինք, արևելքէն՝ Կասպից ծով,  
հարաւէն՝ Պարսից, Ասորեստանեաց և  
Ասորոց սահմանները (ընդհանրապէս՝  
հիւսիսային լայնութեան 37 աստիճա-  
նէն վեր) և Միջերկրական ծովը. և  
հուսկ ուրեմն արևմուտքէն՝ Արշիպե-  
ղազոս, Պրոպոնտիս և Բոսփոր, և անդր  
ևս Եւրոպական Տաճկաստանի մէջ մին-  
չև ցերբոս գետ (Մէրիճ) թրակոյ:

Ասորեստանեայք կամ Գաղղէացիք,  
ինչպէս նաև Ասորոց այն մասը՝ որ Մի-  
ջագետք հաստատուած էր՝ դէմ ընդ  
դէմ արշաւանքներէ պաշարուած՝ մաս  
մը հիմակուան փիւրփոստանու, էլ-ճէ-  
զիրայի և Իրաքի մէջ մնալով, մաս մըն  
ալ մինչև Հնդկաստանի խորերը (Մա-  
լապար) գաղթեր էին: Արամացոց  
կամ Ասորոց մէկ մեծ մասն ալ փիւ-  
նիկէի մէջ ամփոփուեր էր, առաւելա-  
պէս Լիբանան և Անտի-Լիբանան լե-  
րանց սարերն ու ձորերը: — Այլ այ-  
նուհետև հին աշխարհաց անունները  
գործածութենէ դադրած՝ պատմու-  
թեանց խորշերը մնացած էին. նոյնպէս  
գաւառաց անուններն ալ իրենց սահ-  
մաններուն հետ այլայլած էին. Նոր  
գրուած գաւառները՝ ոչ հիներուն կը  
համապատասխանէին և ոչ երկրա-  
կան դրից կը համեմատէին. և իրենց  
յորջորջումը հին քաղաքաց փոփոխեալ  
կամ այլայլեալ անուններէն կ'առնուին.  
և իրաց այս վիճակը ցարդ իսկ կը տեսէ,  
միայն մէկ բացառութեամբ մը՝ որ ետ-  
քի ատեններս տեղի ունեցաւ՝ հին Սու-

րիոյ հարուստիին մասին (Դամասկոսի կուսակալութեան) իր պատմական Սուրիա անունը տրուելով: Ըստ աշխարհաց և գաւառաց նաև ազգութեան գաղափարն ևս չիօթեր էր: Հին ազգացմէ շատերը (մանաւանդ փոքր Ասիոյ մէջ) արդէն անհետ ելել էին, կամ այնպէս փոխուեր և կամ ձուլուեր, որ այլ ևս չէր հնար ճիշդ որոշում մը ընել. և մնացած ազգերէն՝ ոչ սակաւ բազմութիւն մէկէն մէկալին խառնուեր. և ասով նոյն իսկ 'ի բարոյական կարգի ոչ սակաւ մնասներ պատճառեր և բարեկարգութիւնը ամեն դասու մէջ՝ նուազեր և խանգարիւր էր: Կրօնքէն զատ՝ ուրիշ միութեան կապ մը չէր մնացեր. և իւրաքանչիւր հասարակութիւն իր դաւանութեամբն կամ ժխտփն յաւէտ կը զանազանէր:

Օսմանեան պետութեան ամենէն մեծ աշխարհակալը՝ Բիւզանդիոսը առնելէն և իր լայնածաւալ ինքնակալութեան մայրաքաղաք ընելէն ետև, զլիսուրապէս իր տէրութեան անդորութեանն համար խորհեցաւ՝ մահմետական հասարակութենէն զատ, (որ իբր բուն հարգատ ժողովուրդ, յաղթող և տիրող բոլոր միւս հպատակներէն վեր՝ բարձր դիրք մը ունենալով տէրութեան մէջ անհամեմատ առաւելութեամբք և արտօնութեամբք ճոխացեալ էր), նաև միւս նուաճեալ կամ հպատակ ժողովրդոց ևս նոր յորինուածութիւն մը չնորհել. որ հասարակութեան կրօնական-քաղաքային ներքին դործոց հոգ տեսնելու համար պաշտօնական զիրք և տեսակ մը ինքնօրէնութիւն էր, հանդերձ կարևոր արտօնութեամբք և առանձնաշնորհութեամբք: Կ-Պոլիսն առնուելուն պէս՝ այս արտօնութիւնն ընդունեցաւ յոյն հասարակութիւնը, և նոյն քաղաքին յոյն Պատրիարքը՝ արքունի հրովարտակաւ կարգեցաւ Ազգապետ (բաթրիք) նոյն հասարակութեան, որով Օսմանեան տէրութեան մէջ յոյն պատրիարքին կրօնական իրաւաբանութեան ընդարձակութեանը չափ և աւելի ևս կը տարածէր ազգա-

պետական իշխանութիւնն ևս, այսինքն նաև իրմէ բոտ եկեղեցական իրաւաբանութեան անկախ պատրիարքութեանց (Անտիոքայ, Երուսաղեմի և այլն) մէջ գտնուած յունադաւան ժողովրդոց վերայ ևս: Այսու արտօնութեամբ նաև այն ազգերը (Ռումէն, Սերպ, Պուլկար, Ալպան) որ յատաշագոյն Բիւզանդեանց լուծը թօթափելով՝ առանձինն առանձինն թաղաւորութիւն կամ իշխանութիւն ստանալէն ետև՝ Օսմանեան սրոյն ներքև նուաճուեր էին, հարկեցան յոյն պատրիարքին հողեորական իշխանութեան հետ՝ նաև ազգապետութիւնն ևս ճանչնալու և հպատակութեամբ յարգելու: Այս հասարակութեան այսպէս կազմուելէն շատ քիչ վերջը, նոյն մեծ աշխարհակալը՝ ուրիշ մըն ալ կազմեց առանձինն զիսով կամ ազգապետաւ. և թէպէտ 'ի սկզբան ասոր դիրքը առաջինէն ստորին և արտօնութիւնները նուազ էին, բայց այս անհաւասարութիւնը շատ երկայն չտևեց. և անկէ ետքը՝ առաջինը երկրորդէն կարգի մէջ վեր կենալէն կամ բազմելէն զատ՝ ուրիշ առաւելութիւն մը չունէր: Տէրութիւնը այս երկու հասարակութեանց մէկը Ռուս, և միւսը Էրմէնի կ'անուանէր: Առաջինը՝ կրօնիք մի, բայց ազգութեամբ, լեզուաւ, բարուք և սովորութեամբ զանազանեալ տարրներէ կը բաղկանար. որը էին Յոյնք կամ Հելլէնք, որոնց կը պատկանէր այս հասարակութեան վարչական մասը, յունական կրօնիք, օրինօք և կարգօք վարուող Ասիացիք և Սրամէացիք, ինչպէս նաև Հայոցմէ մաս մը (Հայ-Հուսովք և այլն). Եւրոպական Տաճկաստանի մէջ ալ Հելլենացմէ զատ՝ նաև Ռումէնք, Սերպք, Պուլկարք, Ալպանիացիք. համառօտ՝ բոլոր հպատակ յունադաւան քրիստոնեայք: Երկրորդը՝ (Էրմէնի) ազգութեան, լեզուի, և այլն տարբարութենէ զատ՝ կրօնիք իսկ զանազանեալ տարրներէ բաղկացած էր, իր մէջը բովանդակելով յունադաւան չեղած մնացեալ գրեթէ բոլոր հպատակ քրիստոնեաները, այսինքն՝ Հայերը

(նաև կաթողիկ մասը), սրանց կը պատկանէր այս հասարակութեան վարչական մասը, Ասորիները, Եսքուպիները, Բիլտանիները, Նասաթուրիները, նաև Ղփտիները, և այլն: Երկու հասարակութիւնքս ալ ուրոյն Աղգապետ կամ Բաթրիք ունէին՝ արքունի հրովարտակաւ կարգեալ. այսու տարբերութեամբ՝ որ Ռում հասարակութեան Աղգապետը՝ միանգամայն կրօնապետ էր իր հասարակութեան. ընդհակառակն՝ Էրմէնի հասարակութեան Աղգապետը՝ թէ և պաշտօնապէս տէրութեան առջև՝ իբր այնպիսի նկատուած էր, բայց իրօք չէր այնպէս. ըստ որում քիչ առաջ յիշուած հասարակութիւնք իւրաքանչիւր ըստ իւրում դաւանութեան՝ ունէին իրենց կրօնապետն և կրօնական տեսչութիւնը. ինքն Աղգապետն իսկ եկեղեցական դասակարգութեան մէջ կաթողիկոսէն ստորին և անոր հպատակ համարուած էր:

Մեծ աշխարհակալին այս կարգադրութեամբը՝ Օսմանեան ընդարձակածաւալ կայսերութեան մէջ երեք պաշտօնական հասարակութիւնք միայն կը ճանչցուէին՝ իսլամ, Ռում, Էրմէնի: Առաջինը՝ իբր ինքնատէր և ինքնիշխան Պելաքայ կ'անուանէր. իսկ ետքի երկուքը՝ իբր ստորակարգեալ և խնամարկեալ (ուրիշէ կառավարեալ)՝ Բայա: Իշխողաց և իշխեցելոց, խնամարկուաց և խնամարկելոց մէջ անցած անհաւասարութիւնը՝ շատ զգալի ըլլալով՝ անտարբեր այօք միայն նկատելը շատ դիւրին և հեշտին բան չէր: Սակայն գործազրուած իրը՝ նոյն ժամանակին հանդամանաց մէջ մտածելով՝ ոչ միայն անկէ աւելի այն առնն բան մը չի կրնար տրուելու կը համարուէինք, այլ նաև զովութեամբ դրուատելու արժանի գործ մը կը թուի մեզի մեծախորհուրդ աշխարհակալին այս հանճարեղ մտածմունքը և յօրինուածութիւնը, որ էր ամեն կերպ հարստահարութեանց ներքև նեղեալ, չարչարեալ, տառապեալ խեղճ ժողովրդոց սպոփութեան տեղի մը, ապաստանարան մը պատ-

րատուել և յարդարել. բայց զժբարդաբար՝ այն շնորհքները՝ ոչ ըստ մտաց և գիտման շնորհակալին յառաջ գնացին, և ոչ ալ ճշդիւ իրենց նախնական պայմանին մէջ մնացին: Միւս կողմանէ՝ այս ևս խոստովանելու է՝ որ դանուեցան նաև երբեմն քաղաքականութեան անդէտ, կառավարելու արուեստին անճնուտ Աղգապետներ, և տգէտ ու հակառակաէր խորհրդական ամիրաներ, որոնք փոխանակ յօգուտ ՚ի կիր արկանելու շնորհուած արտօնութիւնները, աւելի իրենց փառամոլութեանը, կրիցը և առեւելութեանը ասպարէզ մը դարձընելով զայն՝ այնչափ վշտօք տաղնապեալ ժողովրդոց դարման մը ընելու և սպոփութիւն մը մատուցանելու տեղ՝ անոնց վշտաց տւելխալուն պատճառ կ'ըլլային. և երբեմն ևս առ առաւելն ձկտելով՝ նոյն իսկ մարդուս ամենէն նուիրական բանն եղող խիղճն և կրօնական զգացմունքն անդամ բռնարարելու ձեռք կը զարնէին. յորմէ թէ ինչչափ փնասեր յառաջ եկան, ինչ տուգանք և տառապանք կրուեցան, արգէն ամենուրեք ծանօթ են. և վերջապէս՝ երկայն բարակ չարակրութեանց հետեւութիւնն եղաւ պառակտումը և բաժանումը:

Կառավարութեան առջև լրայա հասարակութեանց միութիւնը կամ բաժանումը յառաջագոյն արժէք մը չունենալով, անոր՝ յայտ մտասին, ընթացքն էր՝ թողլուութիւն ընել հասարակութեանց՝ որ դանուած վիճակնուն մէջ շարունակեն: Ուստի և շատ դիւրութեամբ չդիջաւ երրորդ հասարակութեան մը գերիք ևս ճաննալու և հաստատելու: Այս երրորդ լրայա հասարակութիւնը՝ որ միւսներուն հաւասար արտօնութիւն և անոնց նման արքունի հրովարտակաւ կարգեալ առանձինն Աղգապետ կամ Բաթրիք ստացեր էր, կաթողիկ կ'անուանէր, ըստ որում կաթողիկ Հայերէն կը բաղկանար, և նոյն Աղգապետական արքունի հրովարտակին մէջ յիշուած՝ Մեքլիթ, Մարոնի, Ասորի, Բիլտանի,

և այլ հասարակութիւններն ևս կա-  
 թողիկ Ազգապետին հրովարտակին  
 մէջ յիշատակուելուն բուն պատճառը՝  
 կը թուի որ Ռում՝ և Էրմէնի հասարա-  
 կութեանց այլ ևս չվերաբերելին նշա-  
 նակելու համար եղած ըլլայ: Չիարդ և  
 իցէ այն, ժամանակակից դէպքերուն  
 մանր պարագայիցն իջնել չուզելով, այ-  
 նուհեակ բաժանումները յաճախելու  
 սկսան, զոր առաւել ևս կը ճեպէին,  
 կ'երազէին մէկ կողմանէ վրայ եկած  
 քաղաքական դէպքերը. միւս կողմա-  
 նէ՛ հասարակութեանց մէջ ինքնօրէ-  
 նութեան, և կամ տէրութեան հետ  
 առանց միջնորդի, կամ ուղղակի յա-  
 րաբերութիւն ունենալու բաղձանքը,  
 զոր անշուշտ կը պահանջէին կրօնա-  
 կան ազատութիւնն և հասարակային  
 շահերը. ինչպէս ևս կը տեսնուի փոր-  
 ձով մինչև հիմա. նոյն իսկ կառավա-  
 րութիւնն ևս՝ յայսմ մասին՝ նոր քա-  
 ղաքականութիւն մը բռնած կ'երեար:  
 Ասանկ Ռում հասարակութենէն՝ քա-  
 ղաքական դէպքերու պատճառաւ բաժ-  
 նուեր էին Ռումէնք, Սէրպք, և նոյն  
 իսկ Յունաստան, թէ՛ ըստ ազգապե-  
 տութեան և թէ՛ ըստ եկեղեցական կա-  
 ռավարութեան, ինչպէս նաև հուսկ  
 ուրեմն Պուլկարք. բայց ասոնք էլ բո-  
 պական Տաճկաստանի կը պատկանին:  
 Դառնալով նորէն յԱսիական Տաճկաս-  
 տան, բրթթէստանդ հասարակութիւնն  
 ևս ճանչցուած էր բարձր դրան առջև՝ որ  
 և ունէր արքունի հրովարտակաւ կար-  
 դեալ գլուխ մը, Բրթթէստանդ վէքիլի  
 յորչորջմամբ. ասոր ևս վարչական մասը  
 Հայ-բողոքականաց կը պատկանի, թէ  
 և Հայոցմէ զատ՝ ուրիշ ազգերէ ևս կը  
 գտնուին նոյն հասարակութեան մէջ:  
 Նմանապէս Եսհուրի հասարակութիւն  
 ևս պաշտօնական ճանաչումն ունեցաւ,  
 ինչպէս նաև արքունի հրովարտակաւ  
 կարգեալ գլուխ մը՝ որ Խախամ-պաշի  
 կ'անուանէր: Ասոնք մինչև նոյն ատեն՝  
 ոչ պաշտօնական դիրք ունէին, և ոչ ու-  
 րիշ հասարակութեան մը մասն համա-  
 րուած էին: Մեկքիթ Գուաթիւններն ալ  
 ճանչցուեցան բարձրագոյն դռնէն և ա-

ռանձին դիրք և վէքիլ ունեցան. ա-  
 սոնք Կ-Պոլսոյ մէջ Հալէպլի կ'անուա-  
 նին: Նմանապէս պաշտօնական դիրք և  
 վէքիլ ունեցան Սուրիանի և Գիլտանի  
 հասարակութիւնները: Եւ այսպէս բազ-  
 մացաւ պաշտօնական հասարակու-  
 թեանց թիւը: Պաշտօնական կ'ըսենք,  
 վասն զի այս հասարակութիւնները յա-  
 ռաջագոյն կազմուած ըլլալով՝ ՚ի նորոց  
 պաշտօնապէս կը ճանչցուէին, միայն  
 բողոքականութիւնը նոր էր՝ և տէրու-  
 թեան պաշտօնական ճանաչմամբ կը  
 դասուէր հասարակութեանց կարգը:  
 Մարոնիները իրենց գտնուած քաղա-  
 քական դրիցը յեղեալ, ոչ մէկ հասա-  
 րակութեան մասն ըլլալ յանձն առած  
 են, և ոչ այս տեսակ պաշտօնական  
 դիրք մը ձեռք բերելու՝ հոգ տարեր.  
 Իսկ Լիբանանու արդի վիճակը ամենուն  
 ծանօթ է: Հուսկ ուրեմն նաև (Եւրո-  
 պական Տաճկաստանի մէջ) Պուլկար  
 կաթողիկ հասարակութիւնն պաշտօնա-  
 պէս ճանչցուեցաւ:

Այս է ահա Ասիական Տաճկաստա-  
 նի, կամ Արևմտեան Ասիոյ մէջ հնուց  
 ՚ի վեր անցած դիպաց համառօտ բո-  
 վանդակութիւնը: Այս երկիրը կանուխ  
 առնելով կրթութեան ճաշակը՝ երկայն  
 ատեն ծաղիկալ բարդաւաճեցաւ. եւս-  
 քէն իր մէջը բուսած զեղծմունքները,  
 և արտաբուստ գլուխն եկած աղէտը-  
 ները, հետզհետէ կապտեցին իրմէ այն  
 բարեմասնութիւնքն՝ որոնցմով զարդա-  
 րուած էր. բայց բարեբաղդ ենք տես-  
 նելու, որ այս դարուն մանաւանդ կե-  
 սէն ՚ի վեր կրթութեան և հրահանգաց  
 մէջ ոչ սակաւ յառաջադիմութիւն ըրած  
 է. և ամենէն աւելի Հայ ազգը, որ նոյն  
 իսկ Եւրոպական ազգաց և տէրութեանց  
 առջև մտած համարումն և համակրու-  
 թիւն ստացած է:

Հիմայ անցնինք նկատելու մասնաւ-  
 ւոր տեսութեամբ արևմտեան Ասիոյ  
 կամ ասիական Տաճկաստանի արդի  
 ժողովուրդներն ըստ լեզուաց, ըստ հա-  
 սարակութեանց, և ըստ տոհմից կամ  
 ծագման:

Ա. Ըստ լեզուաց .

Աղիքսանդրի սրոյն հետ յունական լեզուն իբր պաշտօնական մինչև Ինգոս առաջ գնացած ըլլալով, հռովմէական պետութեան ժամանակ առաւել ևս հաստատութիւն գտեր էր . և նոյն իսկ շատ մը հին լեզուաց հետգհետէ խափանուելուն պատճառ եղած էր, մանաւանդ փոքր Ասիոյ մէջ, Սասանեան պետութիւնը՝ անոր ազդեցութիւնը եւ փրատայ արևելեան կողմն եղած գաւառներէն վերցուց: Արաբացիք զայն մինչև Տաւրոս վանեցին, և Թուրք տէրութիւնը՝ փոքր Ասիայէն ևս հալածեց մեծագոյն մասամբ: Ասանկով հիմա յոյն լեզուն՝ Տրապիզոնի կողմերը, և Գանիա ու Ալաքի գաւառները եղած Յունաց կամ յունազաւանից քով մնացած է, և գլխաւորաբար Արշիպեղազոսի վրայ եղած ասիական ծովեղբերը: Ասորիքի մէջ գրեթէ անհետ եղած է: — Հին բնիկ լեզուացմէ մնացածներն են՝ Արաբերէնը, Հայերէնը, Ասորերէնը, Բաղդէարէնը. ետքի երկուքը՝ հիմա նուիրական պաշտամանց մէջ ամփոփուած են, Ասորերէնն՝ Ասորի, Մարոնի և Եսաքուպի հասարակութեանց քով. իսկ Բաղդէարէնը՝ Գիլտանի և Նասթուրի հասարակութեանց քով:

Արաբականը՝ որ Արաբիոյ անապատներուն մէջ միայն կը լսուէր, Մահմետական Արաբացոց իշխանութեան հետ՝ բոլոր Պաղեստին, Ասորիք, Բաբելոնստան, Ասորեստան, Միջագետք մինչև Տաւրոսի և կորդուաց լեռներուն սահմանը (ընդ հանրապէս հիւսիսային լայնութեան 37 աստիճանէն վար դէպ ՚ի հարաւ) տարածուեր էր. ըլլալով այնուհետև յիշեալ երկիրներուն մէջ բնակող ժողովրդոց ընտանեկան, կենցաղավարական, ուսումնական և նոյն իսկ քաղաքական լեզուն: Եկեղեցական պաշտամանց մէջ իսկ՝ Մեքքիթք ըստ բոլորին, և Մարոնիք ըստ մասին՝ նոյն լեզուն կը գործածեն. նաև Ասորոց, Գիլտանցոց, և այլոց քով՝ բոլորովին եկեղեցւոյ մէջէն արտաքրուած չէ արաբերէնը: Եւ ըստ այսմ՝ Հալէպ, Պաղտատ,

Սուրիա, Հէճազ, Եէմէն վիլայէթնեբուն մէջ, և Լիբանան, Ինչպէս նաև բոլոր Արաբական թերակղզին՝ կարմիր ծովուն և Պարսկային ծոցոյն մէջ տեղ տիրող լեզու է Արաբականը:

Հայերէն լեզուն որ յառաջագոյն միայն մեծ Հայաստանի նախնի գաւառաց մէջ ՚ի գործածութեան էր, Արամայ սրոյն հետ դէպ ՚ի հարաւ և մանաւանդ դէպ ՚ի յարեմուտս մինչև Արգէոս լեռին սահմանը տարածուած կը գտնենք: Իսկ հիմա ոչ միայն իբր նուիրական կամ եկեղեցական պաշտամանց լեզու՝ աշխարհքիս վրայ գտնուած բոլոր Հայ քրիստոնէից լեզուն է, այլ նաև՝ արևելքէն դէպ ՚ի արեմուտք՝ Կասպից ծովէն մինչև Եբրոս (Մերիճ) գետոյն ափունքը (որ է յեւրոպական Տաճկաստանի) և հիւսիսէն հարաւ՝ Սեաւ ծովէն մինչև Միջերկրական ծովը (այսինքն բոլոր փոքր Ասիա), և կովկաս լեռներէն մինչև հիւսիսային լայնութեան 37 աստիճանը ընդհանրապէս, (այսինքն բոլոր հին Մեծ Հայաստան), և Միջերկրականին արևմտեան եզերքը մինչև Նահր-էլ-Քէպիր, նոյն Հայ քրիստոնեայք կամ կը խօսին՝ իբր ընտանեկան բարբառ և կամ կ'ընթեռնուն իբր ուսումնական լեզու: Իսկ իբր տիրող լեզու է՝ բոլոր Մեծ և փոքր Հայաստանի մէջ՝ մանաւանդ՝ վան, Էրզրում, Տիարպէքիր, Սեբաստիա վիլայէթներուն և անոնց մօտ գտնուած գաւառներուն մէջ, Ինչպէս նաև Ռուսիոյ և Պարսից հայկական գաւառներուն մէջ. ուր Հայոցմէ գաւտ՝ ուրիշ հասարակութիւնք, ևս և նոյն իսկ մահմետականք, մեծաւ մասամբ՝ կամ կը խօսին, և կամ գոնէ կը հասկընան:

Թուրքերէնը (որ արաբերէնով, պարսկերէնով խառն է)՝ տէրութեան ընդհանուր պաշտօնական լեզուն է. Արաբական գաւառաց մէջ քիչ են գիտցողները. Հայկական գաւառաց մէջ ևս՝ ամենքը չեն գիտեր զայն, և մանաւանդ գրական լեզուն՝ զոր շատ քիչ են հասկըցողները. իբր հասարակաց բարբառ գործածուած վիլայէթներն են Խիւսա-

վէնտիկեար, Ալտին, Գոնիա, Էնդա-  
րէ, Քաստամունէի, Ճանիկ, և այլն :

Կայ նաև ֆիւրտերէնը՝ (որ Պարսից  
լեզուին մէկ գաւառականը կը համա-  
րուի) . բայց ինքնիրեն ոչ գիր ունի, ոչ  
կանոն և ոչ կարգ . նման են ասոր ու-  
րիչ քանի մը մանր ժողովրդական խում-  
բից լեզուները :

Բ. Ըստ հասարակութեանց .

Հիմայ սովորութիւն եղած է Տաճ-  
կաստանի ժողովուրդները ընդհանրա-  
պէս բաժնել 'ի Մահմետական և յոյ-  
Մահմետական : Այս երկու հասարա-  
կութեանց թուական համեմատութիւ-  
նը, հիւսիսային գաւառաց մէջ (այս-  
ինքն հիւսիսային լայնութեան 37 աւ-  
տիճանէն վեր), գրեթէ հաւասար է .  
բայց այն կերպով՝ որ տեղ տեղ մէկ  
տարրը և տեղ տեղ միւսը աւելի կը  
գտնուի : Իսկ հարաւային գաւառաց  
մէջ՝ իրբանն և անոր մերձակայ տեղերն  
'ի բայ առեալ (ուր մեծ բազմութիւնը  
ոչ-մահմետականաց է), ընդհանրապէս  
բազմաթիւ են մահմետականք, մանա-  
ւանդ՝ քանի որ Միլիերկականին եզեր-  
քէն և Հայաստանի հարաւային սահ-  
մաններէն հեռանալով՝ դէպ 'ի հարաւ և  
ներսերը յառաջ երթալ ուզուի . մահմե-  
տականք ամենքը մէկէն բովանդակ օս-  
մանեան պետութեան մէջ իբր մէկ հա-  
սարակութիւն ըմբռնուած են . թէ և լե-  
զուաւ, սովորութեամբք, ազգաւ, անուա-  
նակոյութեամբ, և նոյն իսկ կրօնիք  
տարբեր տարրերէ բաղկացեալ ըլլան :  
Ուստի և թուրքը, թաթարը, Արաբը,  
Քիւրտը, Աւշարը, Չէրքէզը, Լազը,  
Տրուզը, Նուարը, և այլն . նաև ուղ-  
ղակի քրիստոնէութենէ դարձողնե-  
րը, որոնք Չանտրը ևս կ'անուանին, և  
կէս-կէս ըսուածները, (որ յայտնի  
մահմետական և ծածուկ քրիստոնեայ  
են), միանգամայն կը կազմեն Մահմե-  
տական հասարակութիւնը . որով և ի-  
րենց թիւը ոչ-Մահմետականաց իբր  
կրկնապատիկը կ'ըլլայ . ընդ ամենայն  
կըր 7½ միլիոն, որոնց մեծագոյն մասը  
սիւնի են :

Ոչ-Մահմետական հասարակութիւնն

ևս երկուքի կը բաժնուի՝ քրիստոնեայ  
և Հրեայ : Հրեայք սակաւաթիւ են, և  
զլիսաւոր քաղաքաց մեծ մասին մէջ քիչ  
շատ կը գտնուին, ընդ ամենայն իբր  
70-100,000 : Իսկ քրիստոնեայք միան-  
գամայն չորս միլիոնի կը հասնին՝ և հե-  
տեւեալ կերպով բաժնուած են .

ա. Էրմէնի հասարակութիւնը՝ որ կը  
բաղկանայ Հայոց մեծագոյն մասէն, և  
որուն (հասարակային գործոց նկատ-  
մամբ) վերին տեսլութեան ներքև կը  
գտնուին՝ Եագուպի ըսուած Ասորինե-  
րը, և Նասիթուրի ըսուած Քաղպէացի-  
ները . ընդ ամենայն իբր 2½ միլիոն :

բ. Ռում հասարակութիւնը . Յոյն,  
Յունադաւան ընդ որս և Հայ-Հռոմ-  
ասոնք են ասիական Տաճկաստանի մէջ՝  
այս հասարակութեան մասուկը . ընդ  
ամենայն իբր 900,000 :

գ. Կաթողիկ հասարակութիւնը, որ  
իբ մէջը բաժնուած է ըստ ազգաց կամ  
ծիօխց, և ևս ըստ պաշտօնական դրից  
կամ հասարակութեան . և են՝ Հայ (կա-  
թողիկ), Լատին կամ Լատինածէս, Մա-  
րոնի, Մեկթիթ, Ասորի, ֆիլոսոնի . ընդ  
ամենայն իբր 500-600,000 :

դ. Բրոթէստան հասարակութիւնը .  
զլիսաւոր մասը Հայ է, ուրիշ ազգացմէ  
ևս կը գտնուին սակաւք . ընդ ամենայն  
իբր 50,000 :

զ. Ըստ ազգութեան կամ ծագման .  
Ըստ ազգութեան կամ ըստ ծագման  
նկատեալ՝ հիմակուան գտնուած ազ-  
գերն ասոնք են .

ա. Թուրք, որ և տիրող ազգն կամ  
ցեղն է . կը բաղկանայ թուրք-Օսմա-  
նեան, թուրք-Սէլճիւք, թիւրքմէն և  
թաթար ցեղերէն, որոնց հետ խառ-  
նուեր են նաև շատեր՝ Հայ ազգէն և  
ռում հասարակութենէն . մանաւանդ՝  
առաջինները, որոնք մահմետականու-  
թիւնը ընդունելով՝ իրենց ծագումն կամ  
ազգութիւնն ևս մոռցեր կամ չփոթեր  
են . ինչպէս ևս առաջուց 'ի վեր ոչ սա-  
կաւ բազմութիւն մը յԱրաբացուց և 'ի  
Քրդաց : Թուրքերը առաւելապէս կը  
բնակին Խուտավէնտիկեար, Անկիւ-  
րիա, Ալտին, Գոնիա, Քաստամունէի

վիլայէթներուն, և նաև միւս գաւառ-  
ներուն գլխաւոր քաղաքաց շատերուն  
մէջ, Մեծ Հոյաստան, Ասորեստան, և  
Ասորիք շատ քիչուոր են թուրքերը :  
Թուրքաց թիւը Ասիական Տաճկաստա-  
նի մէջ թէ և 3-4 միլիոն կը համարուի,  
բայց ըստ ծաղման առեալ հազիւ եր-  
կուք ու կէս միլիոն կ'ըլլէ :

բ. Թուրքերէն բազմաթիւ են Հոյք,  
Արեաց ազգին ամենէն բարեկիրթ ցե-  
ղը, և նոյն բազմաստեղն տոհմին քա-  
ղաքակրթութեան տարրն ու ակնկա-  
լութիւնը : Ասոնք մեծաւ մասամբ կը  
բնակին Մեծ և փոքր Հայաստան. փոքր  
Ասիոյ մէջ ևս նշանաւոր բազմութիւն  
մը տարածուած է. իսկ Ասորեստանի և  
Ասորիքի մէջ սակաւաթիւ են :

Ասիական Տաճկաստանէն դուրս Ռուս  
և Պարսիկ Հայաստանի և Վրաստանի  
մէջ կան շատ Հայեր կեդրոնացեալ.  
նոյնպէս և Երուսաղիմի Տաճկաստանի,  
Ռուսիոյ (միւս գաւառաց օմանոյ), Աւս-  
տրիոյ, Պարսկաստանի, և Հնդկաստա-  
նի մէջ կը գտնուին ոչ սակաւ Հայք :  
Քրիստոնեայ և Հայ անունը պահող  
(Հայ կամ էրմէնի, Հայ-կաթոլիկ, Հայ-  
Ռողոքական, Հայ-Հոռոմ) ազգիս թիւն՝  
ասիական Տաճկաստանի մէջ երկու մի-  
լիոնէն աւելի է. իսկ անկէ դուրս ե-  
ղած Հայոց թիւը, որոնց բնակած տե-  
ղերն քիչ մը յառաջ յիշեցնիք, իբր մէկ  
ու կէս միլիոնի կը հասնի : Բայց ասիա-  
կան Տաճկաստանի մէջ գտնուած Հայոց  
երկու, երկուք ու կէս միլիոն թուոյն  
վրայ՝ բաւական մեծ կակ թիւ մի ևս ա-  
ւելցնելու է հետեւեալ կերպով. Քրդաց  
մէջ կայ կամ խառնուել է մաս մը Հա-  
յոց, որ և դեռ իրենց հետքը բոլորովին  
չեն կորսնցուցեր. ինչպէս են հնուց 'ի  
վեր մեր կորդուացիները կամ կորճէա-  
ցիք, և եպրէն ևս Մանիքի (Մամի-  
կոնք), Սլիվանք (Սլիւնիք), Ռեշվան  
կամ Ռոշվանը (Ռոշտունիք), և այլն :  
Կան Քրդացած հայեր ալ, որ տակաւին  
հայերէն կը խօսին, ինչպէս են Պալա-  
կըր, և այլն. կան ևս որ դեռ քրիստո-  
նէութեան նշաններ պահած են, ինչ-  
պէս է հաղի զանգուածոյն վրայ խաչի

նշան շինել, և այլն : Այս Հայ-Քրդերուն  
բարձն ալ միւս Քրդերէն կը տարբերի.  
Ինչպէս քիչ մը ետքը պիտի բանք :  
Ռում հասարակութեան մէջ ևս՝ բաց 'ի  
Հայ-Հոռոմներէն՝ որ իրենց անուամբը  
կ'որոշուին, դեռ բաւական թիւ մը Հա-  
յոց խառնուած է, մանաւանդ՝ Մեծ և  
փոքր Հայաստան և անոնց մերձակայ  
տեղերը. ինչպէս շատ աղէկ նկատած  
են եւրոպացի բազմահմուտ ճանապարհ-  
հորդք, անոնց դէմքէն և զծագրութե-  
նէն և այլ հանգամանքներէն առնելով :  
Վերջապէս ուրիշ հասարակութեանց  
հետ խառնուածներն ևս ասոնց վրայ  
աւելցնելով՝ Հայ ազգը կամ սերունդը  
միւսներէն զտելու ըլլանք, ասիական  
Տաճկաստանի մէջ իրենց համազումար  
թիւը չորս միլիոնէն վար չի մնար :

գ. Յոյիք. ասիական Տաճկաստանի  
մէջ աւելի յունադաւան և յունածէս  
կայ, քան թէ բուն Յոյն կամ Հելլէն.  
կղզիները և թխտավէնսիկեարի ու  
Այսարնի գաւառաց ծովեզերքը, 'ի բաց  
առեալ նաև զանոնք, որ նոյն տեղերը  
և անոնց մերձակաները մահմետական-  
նութիւնը ընդունելով՝ թուրքաց մէջ  
խառնուել են. մնացած յոյն կամ լաւ  
ևս Ռում անունը կրողները՝ թէպէտ  
կրօնքով կամ ծէսով յոյն են, այլ ըստ  
ծագման այլ և այլ ազգացմէ առաջ ե-  
կած են, փոքր Ասիոյ արևելեան գաւա-  
ռաց և Հայաստանի մէջ երդնները՝ մե-  
ծաւ մասամբ Հայ են, ևս և սակաւ մնա-  
ցորդ հին ազգաց. նաև քիչ մըն ալ  
(Տրապիզոնի կողմերը) Լազ, Վրացի,  
և այլն : Ասորիքի մէջ Մեքիթիները  
(Գուաթիլի և Ռում) թէ և յունադաւան  
կամ յունածէս են՝ սակայն ամենամեծ  
մասամբ Ասորի կամ Արամէացի են,  
նաև փոքր մաս մի ևս հին արար քրիս-  
տոնէից մնացորդը. իսկ Յունացմէ յա-  
ռաջ եկածները՝ խիստ քիչուոր են : Եւ-  
ասանկ բոլոր ասիական Տաճկաստանի  
մէջ բուն Հելլենաց թիւը հազիւ 500,000  
կ'ըլլէ. ուր ընդ հակառակն՝ ուրիշ յու-  
նադաւան և յունածէսները և իսլամա-  
ցեալները մէկ տեղ առնելով՝ իրենց  
թիւը միլիոնի մը կը հասնի :

դ. Արամէայիք համ Ասորիք կը բնակին Ասորիք և Միջագետք, և երեք հասարակութի են. այսինքն, Սուրիանի, Մուրանի և Եսթրուպի. ընդ ամենայն իբր 350-400,000 : Մեքիթաց մեծ մասն ալ ինչպէս ըսինք առաջ, Արամէացւոց մէսերած է, որ և այժմ երկու հասարակութիւն է, Մեքիթ-Սուր և Մեքիթ-Գուաթի. (այս ետրինները ի-Պոլսոյ մէջ Հայէպլի կ'անուանին). երկուքին թիւը մէկէն 100-150,000 կը հասնի, որով բոլոր Արամէացւոց թիւը կ'ըլլայ իբր 500,000 :

ե. Ատորեստանեայք և Բարեւլայիք կամ Քաղզէայիք կը բնակին Ատորեստան և Միջագետք, կը գտնուին նաև Հայաստանի հարաւային գաւառաց մէջ. երկու հասարակութիւն են, ֆիլատանի և Նասիուրի. իրենց թիւն ա. սիական Տաճկաստանի մէջ է միանգամայն իբր 200,000. Պարսից տէրութեան Ատորեստանի մասն կամ սահմանակից եղած գաւառաց մէջ ևս կը գտնուին աստեցմէ իբր 40-50,000. թող զանոնք որ Մալապար գաղթած են Հնդկաստանի մէջ :

զ. Արաբք, որոնք Արաբիա կը բնակին, Ասորիք և Ատորեստան ևս բազմաթիւ են. և այս ետքի երկու գաւառաց մէջ նաև ոչ սակաւ Ասորի և Քաղզէացի, քիչ մըն ալ Հայ Արաբացւոց հետ խառնուեր են : Արաբ ժողովուրդը շատ ցեղերու բաժնուած է, որոնց մեծագոյն մասը՝ մանաւանդ Արաբիոյ մէջ ազատ և անկախ ցեղապետներով կը կառավարուի. նշանակութեան արժանի է Օմանի տէրութիւնը՝ Արաբիոյ արևելեան ծովափերը և Պարսից ծոցոյն հարաւակողմը՝ բաւական ընդարձակութեամբ : Իսկ օսմանեան պետութեան հպատակ Արաբներուն թիւն է իբր 2 միլիոն :

է. Քիւրաք. որոնք հնուց կորդուացիք, կորտուք, կործայք կ'անուանէին, շատ մըն ալ ուրիշ Հայ ցեղիք և ժողովուրդներ խառնուեր են, ինչպէս նաև մաս մըն ալ Արաբ. Պարսից տէրութեան մէջ ևս մեծ մաս մը քրդաց կը գտնուի,

որոնք հարաւային կորդիա կը բնակին. բոլորը մէկէն ֆիւրտ անուամբ նշանակուած ժողովրդեան թիւը  $1\frac{1}{2}$  միլիոնէն աւելի է. բայց իրենց այս անուանակոչութիւնը ՚ի բաց առեալ՝ չունին ուրիշ միութեան կապ մը : Ասոնց մէկ մասը Օսմանեան և Պարսկային պետութեանց հպատակ է, և միւսը՝ կէս անկախ ցեղապետներու ներքև կը տարուբերի՝ այլ և այլ տոհմային անուանակոչութեամբ : Ուստի և ֆիւրաք ուրոյն ազգ բնուր հանգամանքը չունի. խումբ խումբ անկանոն և անկարգ մարդիկ են, որոնք աւազակութեամբ և ասորառութեամբ կ'ապրին, և իրենց չրջադայած տեղերը աւերելէ, ապականելէ և եղծանելէ ուրիշ բան չունին : Միւոյն անոնք ըստ իմիք ՚ի բաց առեալ են այս վայրագութենէն, որոնք կամ հին հայերէն սոաջ եկած են, և կամ ետքէն ասոնց մէջ խառնուելու դժբաղդութիւնն ունեցեր են : Այս մասը թէ և առ հարկի կրթութենէ զուրկ մնացած է, այսու ամենայնիւ Հայ ազգին սեպհական եղող ձիրքերը ըստ բոլորին չէ մոռցած, զոնէ ՚ի բնական կարգի. կը տեսնուի իրենց վրայ մարդասիրութեան և քաղցրաբարոյութեան բաւական հետքը, պարկեշտ են և զգաստ, աշխատասէր, հիւրամեծար, աւազակութեան և ասարառութեան ատեցող, և այն : Ասիական Տաճկաստանի մէջ ֆիւրտ անունը կրողներուն թիւը մէկ միլիոնի կը հասնի. իրենց բնակութեան կամ չրջագայութեան տեղերն են՝ դիսաւորապէս Հայաստանի հարաւային և Ատորեստանի հիւսիսային գաւառները, որ ֆիւրտիստան ևս կը կոչուի. կը գտնուին նաև Մեծ Հայաստանի միւս գաւառաց մէջ, քոքը Հայաստանի և Կիլիկիոյ լեանակողմերը, նաև քոքը Ասիա և Ասորիքի մէջ :

ը. կովկասեան (լազ, կամ լեզկի կամ Ղեկ, Չէրքէզ կամ եգեր, Մնկրեւ, և այլն) : Լազք իրենց հին երկիրը կը բնակին՝ որ է Լազիկիա, Սև ծովուն եզերքը՝ Տրապիզոնի արևելեան կողմը. նոյնպէս և Մնկրեւք. իսկ Չէրքէզները

և այլն՝ Ռուսաստանէն գաղթելով փոքր Ասիոյ այլ և այլ գաւառաց մէջ տարածուած են . կան նաև իրենցմէ Մեծ Հոս, յաստան, Միջագետք, Ասորիք, և այլն, ընդ ամենայն իրր 600,000 :

Թ. Ասիական Տաճկաստանի ուրիշ մանր ժողովուրդները, Աշարները (որ են հին իսաւրացիք), նաև Պարսիկք, ընդ ամենայն իրր 500,000 կը հասնին :

Ա. Վ. ԱՐՓՍԱՆԻՐԵԱՆ

### ՀԱՆԴԷՍ ՊԱՐԳԵՒՄԱԲԱՇԵՈՒԹԵԱՆ

#### ՄՈՒՐՈՍ-ՌԱՓԱՅԵԼԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԻՆ Ի ՎԵՆԵՏԻԿ

Ըստ սովորութեան այս տարի ալ օգոստոս ամսուն մէջ կատարուեցան Մուրաօ-Ռափայեան Վարժարանին տարեկան հարցաքննութիւնքն, որոնք կը նախագահէր Միթարեանց Գերապ. Աբրահայր Իջնատիտ Արքեպիսկոպոս Արեւելեան՝ ընթերակայութեամբ ուրիշ Միթարեան Հարց: Ուսումնասէր աշակերտք առ հասարակ մեծ հաւաստիք տուին իրենց անգուշ ջանքն ու յառաջագիմուսեանցն, և գտնութիւն պատճառեցին հանդիսականաց, և պատկեցին իրենց դաստիարակաց և ուսուցչաց աշխատութիւնն: Մասնաւոր առաջին դասն ուսումնական վերջնութիւն տարին հասնելով բաց ՚ի կանոնեալ ուսմանց քննութեանն տուաւ նաև խիտ քննութիւն մը բովանդակ քնալուծութեան ուսման, զոր այս տարի աւարտած էր, և որուն մէջ շատերը բաջարան և զարմացուցին բոլոր ունկնդիրքը, և անոր համար Պարգևաբաշխութեան օրը առանձին վկայականաւ ալ պատուեցան:

Իսկ Պարգևաբաշխութեան հանդէսը կատարուեցաւ ՚ի 4 սեպտեմբերի, և այն հանգիսին նկարագրութիւնն լաւագոյն կը համարինք քաղէլ քաղաքի նոյն առուր ըրագիրներէն: Անոնցմէ մէկը կ'ըսէր.

« Այսօր Հայոց Վարժարանին մէջ բաշխուեցան մրցանակք առ բաշխարժ աշակերտս այն Վարժարանին որ իրականաբար բովանդակ Գոտլիոյ ամենն առաջին կարգի վարժարանաց առաջիններէն մէկը համարուած է: Ներկայ էին հանդիսին՝ Հայ Արքեպիսկոպոսը, գաւառապետը՝ կոմսն Սորմանի Մորէզգիի, Օսմանեան Պետութեան հիւպատը, Կանի Մոլէնիոյ քաղաքագլխայն կողմանէ, արքունի ուսումնասպետը, վաճառականութեան Ատենին նախագահը և ուրիշ իշխանական անձինք և ուսուցիչք:

Ջանազան ընթերցումներ եղան՝ հայերէն և տաճկերէն, իտալերէն, գաղղիերէն, անգլիարէն, գերմաներէն, որոնցմով ցուցցին աշակերտք թէ որչափ յառաջացեալ են այն լեզուաց մէջ:

Աշակերտք ընդհատ ընդհատ երգեր ալ երգե-

ցին, որոնք շատ մը անկեղծ ծափահարութիւններ ընդունեցան: Հանդէսը վերջացաւ Հայ Արքեպիսկոպոսին յորհորականով մը և պարգևաբաշխութեամբ:

Յետոյ հրաւիրեալք այց ելան այն սրահին, ուր գեղեցիկ կարգով շարուած էին աշակերտաց ուրուսագրութեան և գեղագրութեան ամենայն բարակութեամբ և կատարելութեամբ եղած աշխատութիւնները:

Այս ամեն բանէս ամենայն օք համոզուեցաւ որ այն Վարժարանին մէջ արուած դաստիարակութիւնը ճիշդ ժամանակին պահանջածն է:

Անկեղծ արտով ուրուսակից ենք Յ. Տեպլայն ձեռլալան Հ. Գրիգոր Վարդապետին, իր ուսումնասպետին, բոլոր նշանաւոր ուսուցչաց և աշակերտաց »:

Ուրիշ ըրագիր մ'ալ յետ պատմելու ներկայ եղող անձինքը, աշակերտաց աշխատութեանց վրայ այսպէս կը խօսի.

« Սրահը շքեղապէս զարդարուած էր և վաշխապէս շարուած էին աշակերտաց տարւոյն մէջ աշխատած ուրուսագրութիւնքը, որոնք արգարե մասնաւոր իշխատակութեան արժանաւոր են, յորս կային պատկերք, զարդագծութիւնք, տեսարանագծութիւնք, երկու կարիճ ուսուցչաց առաջնորդութեամբ եղած՝ որոնք են Երմոլայոյ Փառէզգի և Քուէրէնա:

Առաջին Կասու աշակերտներէն մէկը ճառ մը խօսեցաւ իտալերէն, որ շատ գեղեցիկ տպաւորութիւն ըրաւ ամենուն վրայ գաղափարաց աւսումնութեամբ և վեներեոյ վրայ ցուցցած սիրոյն համար: Ուրիշ ընթերցումներ ալ եղան հայերէն, տաճկերէն, գերմաներէն, անգլիարէն և ընտրող գաղղիերէն մը:

Հանդէսը աշակերտաց երգովն սկսաւ և երգովք լնցաւ, և ուսուցիչնին է նշանաւոր երաժիշտն Քոքքոն: Ամեն երգերն ալ շատ հաճոյ անցան թէ իշխանաւոր անձանց և թէ սյլոց, և անհասարակ ծափահարութեան »:

Օտար ըրագրաց պատմածը բաւական համարելով, աւելորդ կը սեպենք մանրամասն նկարագրել այս հանդէսը: